ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն /հասցե՝ Վ. Սարգսյան 3/, 2026 թ. սեպտեմբերի 18՝ ժամը 17^{00}-18:30^{00}:

2) Նիստի օրակարգը և օրակարգային հարցերին կցված փաստաթղթերը, այլ նյութեր՝

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք
2) ՀՀ երիտասարդական քաղաքականությունը. երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցման մեթոդաբանությունը (զեկուցող՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյան)
3) Հարց ու պատասխան (մինչև 3 րոպե)

Օրակարգին կցված փաստաթուղթ՝

Երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցման մեթոդաբանության նախագիծը

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց տվյալները՝

Նախարարին կից հասարակական խորհրդի 44 անդամից նիստին մասնակցել է 29-ը՝

N	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԱՇԽԱՏԱՎԱՅՐ
1.	Ժաննա Անդրեասյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
2.	Արման Ավետյան	Երևանի պետական և Հայ-ռուսական համալսարանների Կառավարման և բիզնեսի ամբիոնի դոցենտ

3.	Նազանի Հարությունյան	Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, մանկավարժների մենթոր-վերապատրաստող
4.	Նվեր Սարգսյան	Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի ծնողական խորհրդի նախագահ
5.	Նաիրա Մովսիսյան	Աբովյանի շախմատի դպրոցի տնօրեն
6.	Տիգրան Մարտիրոսյան	«Թատերակետեր» թատերագիտական կայքի խմբագիր, ՀԹԳՄ թատերագիտության գծով քարտուղար
7.	Տիգրան Ենգիբարյան	Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ
8.	Տաթևիկ Մովսիսյան	Հայաստանի եվրոպական համալսարանի զբոսաշրջության ամբիոնի վարիչ
9.	Անի Հայրապետյան	Սյունիքի մարզի Բարձրավանի միջնակարգ դպրոցի ֆրանսերենի ուսուցիչ
10.	Արմեն Խաչատրյան	«Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի գիտական բաժնի վարիչ
11.	Հասան Թամոյան	Հայաստան «Էզդիների կրթությունը, գիտությունը, մշակույթը, սպորտը և էզդիաբնակ բնակավայրերը (էզդի բնակիչները)» ՀԿ ներկայացուցիչ
12.	Մխիթար Գասպարյան	ԿԶՆԱԿ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի մասնագետ
13.	Աննա Սեթաղյան	ՌԵԱ փառատոնի համագործակցության և արտաքին կապերի համակարգող

N	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
1.	«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ	Արմեն Հովհաննիսյան
2.	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ	Նոնա Պողոսյան
3.	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ	Արփի Հարությունյան
4.	«Հայաստանի մանուկներ» հիմնադրամ	Գայանե Վարդանյան
5.	Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն	Սեդրակ Վարդանյան
6.	Հայ-չինական գործընկերության կենտրոն	Արմեն Մխիթարյան
7.	«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա	Լիլիթ Անտոնյան
8.	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ	Մարիաննա Ավագյան

9.	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն	Արմեն Մարտիրոսյան
10.	Հայաստանի գործատուների հանրապետական միություն	Վարուժան Ավանեսյան
11.	«Հույս և ապագա» ՀԿ	Էլմիրա Պողոսյան
12.	«Ռեստարտ Գյումրի» ԵՔԿ ՀԿ	Գևորգ Ղուկասյան
13.	«Պանդո» համայնքային զարգացման ՀԿ	Անդրանիկ Պապոյան
14.	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ	Նաիրա Առաքելյան
15.	«Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ	Հովսեփ Խուրշուդյան
16.	«Մարզական հոգեբանների ֆեդերացիա» ՀԿ	Անժելա Բարխուդարյան

Հրավիրված անձինք՝

Քրիստինա Թաթարյան	ԿԳՄՍ նախարարի տեղակալ
Զարա Ասլանյան	ԿԳՄՍՆ երիտասարդության հարցերի վարչության պետ
Հովհաննես Յուքինյան	ԿԳՄՍ նախարարի մամուլի քարտուղար
Հեղինե Հովհաննիսյան	ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, խորհրդի աշխատանքների համակարգող
Գայանե Առաքելյան	ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, խորհրդի աշխատանքների պատասխանատու

4) Քննարկվող հարցերի և դրանց վերաբերյալ ներկայացված դիրքորոշումների (գրավոր կամ բանավոր) հիմնական դրույթները.

Կայացել է ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստը, որը վարել է նախարար Ժաննա Անդրեասյանը: Օրակարգում ներառված էր մեկ հարց՝ «ՀՀ երիտասարդական քաղաքականությունը. երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցման մեթոդաբանության նախագծի ներկայացում»: Նախքան օրակարգի հարցին անցնելը՝ նախարարը ներկայացրել է երիտասարդական քաղաքականության ոլորտը համակարգող նախարարի նորանշանակ տեղակալ Քրիստինա Թաթարյանին: Անցնելով օրակարգի հարցին՝ ԿԳՄՍ նախարարը նշել է, որ երիտասարդական քաղաքականությունը ՀՀ կառավարության գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկն է, և 2026-31 թթ. ծրագրում այն ունի առանձնահատուկ ներկայացվածություն. «Մեզ համար կարևոր է հասկանալ՝ ինչպես աշխատել երիտասարդական տարբեր խմբերի հետ,

որպեսզի գործընթացը լինի առավել համակարգված: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել հաստատել մեթոդաբանություն, որը պետք է բխի որոշակի սկզբունքներից: Ամենակարևոր սկզբունքն այն է, որ երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցությունը պետք է դիտարկել որպես շարունակական գործընթաց՝ սկսած գաղափարի ձևավորումից մինչև նախաձեռնության իրականացումը: Միայն այս շղթայի ապահովումն է, որ կարող է ունենալ կայուն ինստիտուցիոնալ հետևանքներ և ազդեցություններ»: Նախարարի խոսքով՝ նախևառաջ պետք է աշխատանք տանել երիտասարդների հետաքրքրությունների, ներուժի և համայնքային կարիքների բացահայտման ուղղությամբ, աջակցել գաղափարի ձևավորմանը, նախաձեռնող խմբերի ստեղծմանը, ապա արդեն՝ նախագծերի մշակմանն ու պլանավորմանը, անհրաժեշտ ռեսուրսների և գործընկերների ներգրավմանը, բուն նախաձեռնության իրականացմանը: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ կարևոր է երիտասարդներին աջակցել նաև ինքնահայեցման ուղղությամբ, որպեսզի նրանք գնահատեն ստացված արդյունքները և ըստ անհրաժեշտության, իրենց հետագա քայլերը վերանայեն և նախաձեռնությունը շարունակական զարգացնեն: «Աջակցություն ասելով՝ նկատի չունենք միայն ֆինանսական կամ կազմակերպչական աջակցությունը. ամենակարևոր անելիքներից մեկը երիտասարդներին համապատասխան գիտելիքների, հմտությունների, խորհրդատվության և մենթորության տրամադրումն է, որը նրանց ինքնաբավ կդարձնի: Բացի այդ՝ երիտասարդների աջակցությունը պետք է համագործակցության տրամաբանության մեջ լինի և իրականացվի տարբեր դերակատարների հետ համատեղ: Այս գործընթացում, բացի լիազոր պետական մարմնից, պետք է ակտիվորեն ներգրավվեն համայնքները՝ երիտասարդների մասնակցության և նախաձեռնությունների իրականացման համար ստեղծելով անհրաժեշտ միջավայր, և այս առումով մեզ համար ամենակարևոր ինստիտուտներից են երիտասարդական կենտրոններն ու երիտասարդական աշխատողները»,- նշել է նախարարը՝ այս հարցում կարևորելով նաև համայնքում գործող կրթական և այլ կազմակերպությունների դերը: «Ներկայում ակտիվորեն կառուցվում են նոր դպրոցներ և մանկապարտեզներ, որոնք ունեն շատ ընդարձակ տարածքներ: Դրանք միայն ուսումնական գործընթացի կազմակերպման համար չեն. այդ տարածքները պետք է ծառայեն նաև համայնքին: Հետևաբար, այս հաստատություններն էլ պետք է վերագնահատեն իրենց դերը տվյալ համայնքում և տեսնեն իրենց համախմբող ու համագործակցային ներուժը: Այս խնդիրը հատկապես կարևորում եմ 13-15 տարեկան երիտասարդական նախաձեռնող խմբերի աջակցության մասով, որոնց առանձնահատկությունները մեթոդաբանության մեջ ամրագրված են: Օրինակ, երբ նշում ենք, որ արդեն 18 տարեկանում լիարժեք քաղաքացիական մասնակցություն պետք է ենթադրվի, ապա դա մեկ օրում չի ձևավորվում: Որպեսզի 18 տարեկանում քաղաքացիները պատրաստ լինեն այդ հարցերի շուրջ խորհելու և որոշումներ

կայացնելու, ապա այդ վստահությունը նրանց պետք է ընձեռվի ավելի կրտսեր տարիքից: «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքով երիտասարդության տարիքի նվազագույն շեմը սահմանված է 13-ը, և սա պատահական չէ: Դրանով մենք նաև պատասխանատվություն պիտի ստանձնենք քաղաքացիական կրթության և հանրային կյանքի մասնակցության անհրաժեշտ խողովակներն ապահովելու ուղղությամբ», -ընդգծել է Ժաննա Անդրեասյանը: Նախարարը կարևորել է, որ մասնակցային բյուջետավորման գործընթացում 13-15 տարեկան երիտասարդների համար անհրաժեշտ է ստեղծել հնարավորություններ՝ հանդես գալու որպես նախաձեռնությունների հեղինակներ և առաջ տանելու իրենց գաղափարները. «Հույս ունենք, որ համապատասխան օրենսդրական կարգավորումներից հետո 13-15 տարեկան երիտասարդների՝ հանրային և քաղաքացիական մասնակցության առումով նոր ինստիտուցիոնալ խթաններ կնախատեսենք: Միաժամանակ, կարևորում ենք, որ մենթորության տրամաբանությամբ մասնագիտական դիտարկումների փուլ լինի: Այն կօգնի այս տարիքային խմբին մասնագիտական քննարկումների միջոցով ներգրավել մասնագետների՝ իրենց գաղափարների զարգացման և դրանց իրագործելիության ուղղությամբ քայլեր իրականացնելու նպատակով, որը շատ կարևոր փորձառություն կլինի»: Ժաննա Անդրեասյանը կարևորել է, որպեսզի այս ամենն ունենա մոնիթորինգի և գնահատման պատշաճ համակարգ և լինի շարունակական մշտադիտարկման ներքո, որը հնարավորություն կտա տեսնել այս քաղաքականությունների ազդեցությունը համայնքային կյանքում և վերլուծել կատարված աշխատանքը. «Սա կարևոր քայլ է երիտասարդական քաղաքականության նոր համակարգի զարգացման ճանապարհին, որովհետև այս մեթոդաբանության կիրառման արդյունքում կբարձրանա երիտասարդական նախաձեռնությունների որակն ու իրագործելիությունը, կամրապնդվեն երիտասարդների ինքնուրույնության և այլ ուղղություններով կարողությունները, կզարգանա նրանց քաղաքացիական համայնքային մասնակցությունը, համագործակցային միջավայրը կզարգանա պետական համայնքային և այլ դերակատարների միջև, և նախաձեռնությունների շարունակական զարգացման հնարավորություններ կստեղծվեն»: Նախարարն ուրախությամբ արձանագրել է, որ երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը ներկայում ավելի մեծ տեղ է զբաղեցնում նաև տարբեր գերատեսչությունների գործունեության մեջ: «Տարբեր պետական և ՏԻՄ մարմիններում ձևավորվում են երիտասարդական խորհուրդներ և հարթակներ, որոնցում երիտասարդների ձայնը լսելի լինելու հնարավորություն է ձևավորվում: Այս ամենը, սակայն, բավարար չէ. մենք պետք է կարողանանք համալիր ու ամբողջական աշխատանք տանել, և այս նախաձեռնությունը կարող ենք դիտել իբրև այդ աշխատանքի քայլերից մեկը»,- իր ելույթն ամփոփել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի զեկույցից հետո խորհրդի անդամները մի շարք հարցեր են ուղղել նախարարին, ինչպես նաև ներկայացրել օրակարգի հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումներն ու առաջարկները:

«Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ ղեկավար Հովսեփ Խուրշուդյանը բարձրաձայնել է հանրության ձայնը լսելի դարձնելու և հասարակական խորհրդի աշխատանքների արդյունավետության վերաբերյալ մի շարք հարցեր: Մասնավորապես՝ անդրադառնալով նիստի տևողությանը՝ նա նշել է, որ սահմանափակ ժամանակահատվածում խորհրդի բոլոր անդամների կողմից հարցերի և առաջարկությունների ներկայացման հնարավորությունը բավարար չէ: Հովսեփ Խուրշուդյանը կարևորել է հանրության հետ հաղորդակցության առավել արդյունավետ և պարբերական շփման մեթոդաբանության ձևավորումը՝ այդ համատեքստում նշելով, որ աշխատանքային խմբերի քննարկումների շրջանակում, ի թիվս այլ առաջարկների, ներկայացրել է ֆեյսբուքյան հարթակ ստեղծելու վերաբերյալ առաջարկը, որը կարող է նպաստել հանրության հետ օպերատիվ և թափանցիկ հաղորդակցությանը և բարձրաձայնվող խնդիրների համակարգմանը: Նրա խոսքով՝ նման հարթակը լեգիտիմ կլինի, եթե այն ստեղծվի նախարարության կողմից: Հովսեփ Խուրշուդյանը նաև ներկայացրել է կրթության ոլորտին վերաբերող մի շարք ահազանգեր և մտահոգություններ, մասնավորապես՝ PISA հետազոտության արդյունքների, քաղաքացիների կողմից դպրոցների տնօրենների գործունեության վերաբերյալ ահազանգերի և դրանց պատշաճ արձագանքման, ուսուցիչների աշխատանքից ազատման և այլնի վերաբերյալ:

Ի պատասխան՝ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ հասարակական խորհրդի աշխատանքների համար ժամանակային սահմանափակում չի սահմանվում, և յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ներկայացնելու իր մտքերն ու առաջարկությունները: Նախարարը նշել է, որ ֆեյսբուքյան հարթակը կարող են ձևավորել խորհրդի անդամները, որոնց մասնակցություն կունենան նաև նախարարության աշխատակիցները: Նա պարզաբանել է, որ հասարակական խորհրդի նիստերի օրակարգը ձևավորվում է նախապես՝ սահմանված ընթացակարգին համապատասխան, և խորհրդի անդամները հնարավորություն ունեն օրակարգում հարցեր առաջարկելու: Նախարարը կարևորել է քննարկումների արդյունավետ կազմակերպումը և առաջարկել բարձրացված հարցերը քննարկել համապատասխան օրակարգի շրջանակում կամ դրանք ներկայացնել առանձին նիստի ընթացքում: Միաժամանակ, նա նշել է, որ նախարարությունը միշտ պատրաստ է բոլոր հարցերի շուրջ բաց ու անկեղծ խոսակցության, ավելին՝ շատ հաճախ նախարարությունն է նախաձեռնում նման քննարկումներ: Ժաննա Անդրեասյանը նշել է, որ եթե խորհրդի անդամի կողմից նախկինում ներկայացված առաջարկությունները չեն ստացել համապատասխան ընթացք, ապա պատրաստ է ուսումնասիրել այդ հանգամանքները և անհրաժեշտության դեպքում ապահովել դրանց քննարկումը: Նա առաջարկել է

հասարակական խորհրդի առանձին նիստում անդրադառնալ Հովսեփ Խուրշուդյանի բարձրացրած հարցերին՝ անհրաժեշտության դեպքում նրան հնարավորություն տալով հանդես գալ որպես զեկուցող: Անդրադառնալով բարձրացված ահազանգերին՝ նախարարն առաջարկել է փոխանցել կոնկրետ ահազանգերը՝ ընդգծելով, որ պատրաստ է ուսումնասիրել այդ դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը: Նա ընդգծել է նաև հասարակական խորհրդի գործունեության շրջանակում բարձրացված խնդիրների ոչ միայն առանձին, այլև համակարգային քննարկման կարևորությունը: Նախարարը կարևորել է հասարակական խորհրդի դերը՝ ընդգծելով, որ քննարկումները կարող են լինել նաև սուր, բայց միաժամանակ՝ առարկայական և օգտակար:

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ նախագահ Նաիրա Առաքելյանը, ողջունելով նախաձեռնությունը, նշել է, որ կազմակերպությունն արդեն հինգ-վեց տարի է՝ մասնակցում է բյուջետավորման թեմայով քննարկումներին, և անհրաժեշտություն է առաջացել նմանատիպ մեթոդաբանությամբ աշխատել և՛ դպրոցներում, և՛ երիտասարդական կենտրոններում: Նա կարևորել է նշյալ գործընթացներում երիտասարդների՝ ավելի վաղ տարիքից ներգրավումը, որպեսզի հետագայում նրանք դառնան լիիրավ քաղաքացիներ: Նաիրա Առաքելյանը նշել է, որ 9 երիտասարդական կենտրոններում իրականացրել են մասնակցային բյուջետավորման նախագծեր մշակելու թեմաներով դասընթացներ և արդեն ունեն մշակված առաջարկներ, որոնք պետք է ներկայացնեն համայնքներին: Նաիրա Առաքելյանը նաև նշել է, որ Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների աջակցությամբ, GIZ-ի հետ միասին, վեց համայնքներում փորձնական մշտադիտարկում են իրականացնում մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ և մշակվում է մեթոդաբանություն՝ տարվա վերջին համատեղ արդյունքները քննարկելու նպատակով, որի վերաբերյալ ակնկալում է նաև նախարարության առաջարկները:

Ի պատասխան՝ նախարար Ժաննա Անդրեասյանը գոհունակությամբ նշել է, որ մշտադիտարկման մասնակիցները երիտասարդներն են, որոնք ունեն մեծ ներուժ: Նախարարը կողմ է արտահայտվել՝ համատեղ քննարկելու համապատասխան մեթոդաբանությունը:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանն առաջարկել է PISA հետազոտության արդյունքների վերաբերյալ նիստ անցկացնել մոտակա 10 օրվա ընթացքում՝ պատրաստակամություն հայտնելով Հովսեփ Խուրշուդյանի հետ համատեղ լինել համազեկուցող:

Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ քննարկման թեմայի համար նախատեսված օրն ու ժամը կհստակեցվեն, և հասարակական խորհրդի անդամները հավելյալ կտեղեկացվեն:

«Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի գիտական բաժնի

վարիչ Արմեն Խաչատրյանը նշել է, որ մանրամասն ուսումնասիրել է մեթոդաբանությունը և պատրաստել է առաջարկների գրավոր փաթեթ՝ նախարարությանը ներկայացնելու նպատակով: Միաժամանակ, նա բարձրաձայնել է մի քանի հարց. առաջինը՝ մասնակցային սահմանափակման ռիսկերը: Ըստ նախագծի՝ երիտասարդը կարող է միաժամանակ ընդգրկվել միայն մեկ երիտասարդական նախաձեռնող խմբում: Նրան հետաքրքրել է՝ արդյոք սա չի սահմանափակում հատկապես փոքր կամ հեռավոր համայնքների ակտիվ երիտասարդներին, որտեղ մարդկային ռեսուրսը քիչ է, և նույն անձը կարող է իր ներդրումն ունենալ մի քանի ոլորտային նախագծերում: Երկրորդ դիտարկումը վերաբերել է 13-15 տարեկանների ձայնի ազդեցությանը: Նրա խոսքով՝ քանի որ ըստ նախագծի նշյալ երիտասարդները չեն մասնակցում մասնակցային բյուջետավորման գործընթացի քվեարկությանը, և նրանց ազդեցությունն ապահովվում է հանրային ներկայացման միջոցով, ինչպե՞ս է գործնականում երաշխավորվելու, որ մեծահասակների քվեարկության արդյունքում պատանիների ներկայացրած նախագծերը դուրս չմնան, և արդյոք նրանց համար բյուջեի առանձնացված քվոտա է լինելու: Երրորդը, ըստ Խաչատրյանի, մշտադիտարկման և գնահատման գործընթացն է, որում ներգրավված են հենց նույն դերակատարները, խմբերը, կենտրոնները, համայնքը: Նրան հետաքրքրել է՝ ինչպե՞ս է ապահովվելու գնահատման օբյեկտիվությունը, եթե չկա անկախ, երրորդ կողմի փորձագիտական մշտադիտարկման մեխանիզմ:

Ի պատասխան՝ նախարարը շնորհակալություն է հայտնել Արմեն Խաչատրյանին նախագիծը մանրամասն ուսումնասիրելու և դիտարկումներ ներկայացնելու համար: Քանի որ ներկայացված նախագիծը դեռևս քննարկման փուլում է, նախարարը խնդրել է առաջարկների գրավոր փաթեթն ուղարկել, որպեսզի նախարարության աշխատակիցները մանրամասն անդրադառնան բոլոր առաջարկներին:

«Թատերակետեր» թատերագիտական կայքի խմբագիր Տիգրան Մարտիրոսյանը բարձրաձայնել է երիտասարդների խրախուսման ձևաչափերի, թատերական ներկայացումների կազմակերպման ձևաչափի և գնահատման չափանիշների, ինչպես նաև ծնողների իրազեկվածության և մասնակցության վերաբերյալ հարցեր: Մասնավորապես՝ նա հետաքրքրվել է, թե ինչ դեպքերում և ինչ ձևաչափերով է նախատեսվում երիտասարդների խրախուսումը, ինչ չափորոշիչներով են գնահատվելու ստեղծագործական աշխատանքները և թատերական ներկայացումների արդյունավետությունը, ինչպես է կարգավորվելու ծնողների թույլտվության և մասնակցության հարցը: Նա պատրաստակամություն է հայտնել ներկայացնել քննադատական մտածողության, գրաքննադատության, թատերական քննադատության վերաբերյալ հստակ առաջարկներ: Տիգրան Մարտիրոսյանին հետաքրքրել է նաև, թե նախաձեռնողական խմբերի շրջանակում իրականացվող ծրագրերի կամ ներկայացումների մեջ, որպես հակաքարոզչություն,

արդյոք նախատեսվո՞ւմ են որոշակի միջոցառումներ, որպեսզի երեխաներն առավելագույնս պաշտպանված լինեն վնասակար սովորությունների վտանգից:
Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ խրախուսման ձևերը կարող են տարբեր լինել՝ ներառելով բազմազան ծրագրերի, մասնագիտական վարպետության դասերի և ստեղծագործական նախաձեռնությունների մասնակցության հնարավորությունները: Նա կարևորել է խրախուսման տարբեր ձևերի փոխկապակցվածությունը՝ հաշվի առնելով կամավորության և հետազոտական աշխատանքի դերը բուհերի ընդունելության նոր համակարգում: Անդրադառնալով ստեղծագործականության խթանմանը՝ նախարարն ընդգծել է, որ այն կարևոր նշանակություն ունի հատկապես արհեստական բանականության զարգացման պայմաններում՝ կարևորելով երեխաների ստեղծագործականության, նորարարական մտածողության և հմտությունների զարգացումը: Նա նշել է, որ անհրաժեշտ է խրախուսել արվեստի տարբեր ձևերը, այդ թվում՝ թատերական արվեստը, իսկ դրա գնահատման չափանիշների վերաբերյալ պատրաստակամություն հայտնել քննարկելու ներկայացվող առաջարկները: Ծնողների մասնակցության վերաբերյալ նախարարն ընդգծել է վստահության կարևորությունը՝ նշելով, որ անհրաժեշտ է ծնողների հետ համատեղ աշխատել՝ երեխաների ինքնուրույն որոշումների կայացման, ապահովության և պատասխանատվության ձևավորման ուղղությամբ: Նախարարը կարևորել է Տիգրան Մարտիրոսյանի դիտարկումը՝ ընդգծելով, որ, ընդհանրապես, իրազեկումը, վնասակար սովորություններից զերծ պահելը, առողջ ապրելակերպը կարմիր գծով անցնում են նախարարության բոլոր նախաձեռնություններում:
Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի ծնողական խորհրդի նախագահ Նվեր Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով նախաձեռնության համար, առաջարկել է խորհրդի նիստերի տևողությունը մեծացնել՝ առավել արդյունավետ և խորքային քննարկումներ ապահովելու նպատակով: Նա տեղեկացրել է, որ նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկների փաթեթն արդեն ներկայացրել է նախարարությանը: Նվեր Սարգսյանը կարևորել է նաև ծնողական խորհուրդների մասնակցությունը՝ ընդգծելով, որ ծնողների ներգրավվածությունը նպաստում է երեխաների մասնակցության բարձրացմանը: Նա անդրադարձել է անվտանգ և ապահով կրթական միջավայրի վերաբերյալ նախորդ նիստերում բարձրացված հարցերին՝ հետաքրքրվելով, թե արդյոք կամփոփվեն և կներկայացվեն այդ ուղղությամբ ներկայացված առաջարկներն ու խնդիրները: Անդրադառնալով դպրոցների ներքին գնահատման գործընթացին՝ նա նշել է, որ գործող գործիքակազմն արդյունավետ չէ, և առաջարկել է այն կատարելագործել՝ գործընթացում նաև ծնողական և աշակերտական խորհուրդների մասնակցությունն ապահովելով: Խորհրդի անդամը բարձրաձայնել է նաև ուսուցիչների իրավունքների վերաբերյալ ստացվող ահազանգերը և առաջարկել ուսումնական տարվա մեկնարկին Կրթության, առողջապահական և աշխատանքի տեսչական

մարմինների կողմից դպրոցներում համատեղ իրազեկման արշավներ իրականացնել: Վերջում Նվեր Սարգսյանն անդրադարձել է Աշտարակի Կարմրավոր եկեղեցուն կից՝ 11-13-րդ դարերի տապանադաշտի պահպանության խնդրին՝ նշելով, որ հուշարձանը վտանգված է, մասնավորապես՝ տարածքով ճանապարհ է բացվել: Նա տեղեկացրել է, որ խնդիրը բարձրաձայնվել է նաև սոցիալական ցանցերում և համապատասխան մարմիններին, և ակնկալում է նախարարության արձագանքը և խնդրի լուծման ուղղությամբ քայլերը:

Ի պատասխան՝ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ հուշարձանների պահպանության հետ կապված նման դեպքերում նախարարությունը դիմում է համապատասխան իրավապահ մարմիններին: Նա ընդգծել է, որ ներկայացված դեպքն անթույլատրելի է, և պատրաստակամություն հայտնել լրացուցիչ ստուգել իրավիճակը՝ նշելով, որ անհրաժեշտության դեպքում նման հարցերով դիմում են նաև դատախազության և ՆԳՆ գործընկերներին: Մնացած բարձրացված հարցերի վերաբերյալ նախարարը վստահեցրել է, որ դրանք նույնպես կպահվեն ուշադրության կենտրոնում:

Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ Վարուժան Ավանեսյանը հանդես է եկել առաջարկով, այն է՝ նախագծի բազմաթիվ հոդվածներում նշված լավ հմտությունների շարքին տալ փափուկ հմտություններ սահմանումը՝ այն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով և հավելել, որ Գործատուների միությունը պատրաստ է ստանձնելու ընդհանուր գործընթացի մենթորությունը, աջակցությունը և մոնիթորինգը:

Ի պատասխան՝ նախարարը կարևորել և ընդունել է համարել Վարուժան Ավանեսյանի առաջարկը՝ սահմանումների հետ կապված:

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության ներկայացուցիչ, Արմատ ծրագրի ղեկավար Սեդրակ Վարդանյանը, կարևորելով երիտասարդական խմբերի աջակցման հարցը, նշել է, որ նմանատիպ նախաձեռնությունների ստեղծման և գործունեության համար կարևոր է երիտասարդական կենտրոնների ստեղծումը, որոնք էլ պետք է պայմաններ ապահովեն՝ երիտասարդների նախաձեռնողականության ցուցաբերման համար: Նա առաջարկել է, որ երիտասարդները նաև որոշակի խնդիրներ լուծեն իրենց դպրոցի և համայնքի համար, և այդ նպատակով գրավոր առաջարկ են ներկայացրել ԿԳՄՍ, ԲՏԱ և Տարածքային կառավարման նախարարություններին, որպեսզի նախագծային աշխատանքների համապետական մրցույթ անցկացվի, որն էլ իր հերթին կարևոր խթան կհանդիսանա այդ գործընթացի արդյունավետության համար:

Ի պատասխան՝ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է առաջարկվող գաղափարը՝ նշելով, որ նախագծային ուսուցումը նոր չափորոշչի շրջանակում ներդրվել է, և արդեն կան դրական արդյունքներ՝ հատկապես երեխաների մոտիվացիայի, թիմային աշխատանքի, տարբեր կարևոր հմտությունների

զարգացման ուղղությամբ: Նախարարի խոսքով՝ մրցույթի գաղափարը կարող է ավելի ոգևորել երիտասարդներին և առաջարկել է միասին քննարկել դրա իրագործման հարցը: Նա նաև հավելել է, որ Կառավարության նոր ծրագրում ևս 30 երիտասարդական կենտրոնների ձևավորման հնարավորություն է նախատեսված հետևյալ ձևաչափով՝ նախարարությունը հատկացնում է դրամաշնորհային գումար տարածքի վերանորոգման և անհրաժեշտ կահավորման համար, համայնքը սովորաբար տարածքն է տալիս, իսկ հասարակական կազմակերպությունը լինում է օպերատորը, այսինքն՝ իրականացնողը: Ըստ նախարարի՝ նաև աշխատանք է տարվում այն ուղղությամբ, որպեսզի բոլոր նորակառույց դպրոցներում ապահովվի երիտասարդական միջավայր. դրանք լինեն երիտասարդների կենտրոն, իսկ դասերից հետո էլ՝ ակտիվ տարածքներ:

Հայաստան «Էզդիների կրթությունը, գիտությունը, մշակույթը, սպորտը և էզդիաբնակ բնակավայրերը (էզդի բնակիչները)» ՀԿ նախագահ Հասան Թամոյանն առաջարկել է մեթոդաբանության մեջ ներառել երիտասարդի սահմանումը և նշել հստակ տարիքը: Նա նաև առաջարկել է, որպեսզի օտարալեզու եզրույթները փոխարինվեն համարժեք հայերենով:

Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ բոլոր դիտարկումները կքննարկվեն՝ միաժամանակ հավաստիացնելով, որ նախագծում կօգտագործվի օտարալեզու բառերի համարժեք հայերենը:

«Պանդո» համայնքային զարգացման ՀԿ նախագահ Անդրանիկ Պապոյանը ներկայացրել է մի շարք հարցեր՝ երիտասարդական նախաձեռնող խմբերի ինստիտուցիոնալացման և գրանցման, համայնքներում մարդկային ռեսուրսի զարգացման, ինչպես նաև նշյալ խմբերի համար դպրոցների տարածքների հասանելիության վերաբերյալ:

Նախարարը, Անդրանիկ Պապոյանի առաջարկները համարելով օգտակար, նշել է, որ պետք է մտածողություն փոխել և հասկանալ՝ ինչ է նշանակում հանրային տարածք և համայնքի ներսում բաց աշխատանք: Ըստ նախարարի՝ այդ նպատակով դպրոցների և կրթահամալիրների կանոնադրություններում կատարվել են փոփոխություններ, խնդիրը, սակայն, միայն օրենսդրական փոփոխությունով չի կարող լուծվել. դրա համար պետք է մեծածավալ աշխատանք կատարվի:

Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Տիգրան Ենգիբարյանն անդրադարձել է դպրոցներից մեկում էկոկրթական խմբակ ձևավորելուն, որն աստիճանաբար ընդլայնվել է՝ դառնալով էկոկրթական միություն: Նա նշել է, որ այդ նախաձեռնությունը ոգեշնչող է դարձել մյուս դպրոցների համար, որի արդյունքում ձևավորվել է երիտասարդական մեծ ցանց, հետևաբար ներկայացվող նախագիծը շատ սպասված էր: Ենգիբարյանը նաև նշել է՝ քանի որ նոր չափորոշչով նվազում է 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի ծանրաբեռնվածությունը, որի արդյունքում նա կարող է ներգրավվել երիտասարդական նախագծերում կամ կամավորական

աշխատանքներում, հետևաբար առաջարկում է տարիքային սահմանը 13-15-ից դարձնել 17 կամ 18՝ այն փոխկապակցելով չափորոշչի փոփոխություններին:
Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ այն կարևոր առաջարկ է, որն անպայման կքննարկվի:
ԿՋՆԱԿ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի մասնագետ Մխիթար Գասպարյանն առաջարկել է ստեղծել մի մեխանիզմ, որ հաջորդ նիստերի ժամանակ պայմանական 10 հերթագրվողի հնարավորություն տրվի օրակարգի թեմայից դուրս հարցադրումներ և առաջարկություն ներկայացնելու: Նա տեղեկացրել է, որ նախագծի վերաբերյալ դիտարկումները կներկայացվեն Իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում:
Նախարար Ժաննա Անդրեասյանը, արձագանքելով Մխիթար Գասպարյանի առաջարկին, նշել է, որ անպայման հաշվի կառնվի առաջարկը և հավելել, որ այսուհետ որևէ հասարակական խորհրդի նիստ չի կարող երկու ժամից պակաս պլանավորվել:
«Ռեստարտ Գյումրի» ԵՔԿ ՀԿ նախագահ Գևորգ Ղուկասյանը, կարևորելով իրականացվող պետական քաղաքականությունը, հետաքրքրվել է՝ արդյոք նախարարությունն իրականացնում է երիտասարդական կենտրոնների մոնիթորինգ և գնահատում, և եթե այո, ապա ի՞նչ չափանիշներով: Նրան նաև հետաքրքրել է՝ արդյոք աշխատանքները լինելու են թիրախային՝ ըստ մարզի և համայնքի կարիքների: Գևորգ Ղուկասյանն առաջարկել է ի դեմս երիտասարդների՝ ստեղծել նոր քաղաքացիական հասարակություն՝ նոր արժեքներով և մոտեցումներով, որի վերաբերյալ որոշ առաջարկներ պատրաստակամություն է հայտնել ներկայացնել գրավոր:
Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ մոնիթորինգի համակարգի ուժեղացումն ամենակարևոր աշխատանքներից է, որ պետք է արվի: Նրա խոսքով՝ առկա են մշտադիտարկման համակարգեր, որոնք պարտադիր են թե՛ պետական բյուջետավորման գործընթացում, թե՛ սահմանված ընթացակարգերում, սակայն պետք է կարողանալ գնահատել իրականացված գործողությունների ազդեցությունները, որպեսզի յուրաքանչյուր աշխատանքում ամրագրվեն կատարողականի ցուցանիշներ, թե որքանով է արդյունավետ կոնկրետ ուղղությամբ կոնկրետ գործողությունը: Նախարարը նաև կարևորել է, որ աշխատանքները լինեն թիրախային, և այդ նպատակով երիտասարդական քաղաքականության մեջ շեշտադրումը դրվում է համագործակցության վրա: Ըստ նախարարի՝ երիտասարդական կենտրոնների ստեղծման գործընթացում պետությունն ընդամենը կողմերից մեկն է, համայնքը պետք է լինի դրա մասը, որովհետև համայնքի ամենակարևոր հանձնառություններից մեկը տվյալ տարածքում մարդկանց կարիքների գնահատումն է: Նրա խոսքով՝ տվյալ համայնքի երիտասարդները համայնքի հետ միասին պետք է որոշեն այն ծրագրերը, որոնք նպատակային են գտնում, իսկ նախարարությունը պետք է աջակցի, ուղղորդի,

դրամաշնորհային ծրագրերով լրացուցիչ հնարավորություններ ստեղծի: Նախարարի խոսքով՝ իհարկե, կան ընդհանուր սկզբունքներ, բայց ամեն համայնք պետք է լինի իր խնդիրների վրա կենտրոնացած:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած գրավոր կամ բանավոր դիրքորոշումների քննարկման արդյունքները.

Ամփոփելով նիստը՝ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել շահագրգիռ քննարկման և հետաքրքիր հարցադրումների համար՝ փաստելով, որ խորհրդի անդամները մանրամասն ծանոթացել էին փաստաթղթին և շատ կոնկրետ ու առարկայական առաջարկներ հնչեցրել, որոնք հանդիպումն էլ ավելի օգտակար են դարձրել: Նախարարը նաև առաջարկել է խորհրդի անդամներին առաջարկներ ներկայացնել համատեղ աշխատանքի ձևաչափի վերաբերյալ:

Նիստը նախագահող՝ **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան**

Արձանագրող՝ **Նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքների պատասխանատու Գայանե Առաքելյան**